



Պատմա-հայտնաբերական
Յովհաննէս Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՆԻՈՅ

Համակրեց ուղղելի էմ
ստ. Ղ. Գ. Պալազարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՒՆԻՈՅ ԾԱԲԱԹ 2 ՓԵՏՐՈՒԱՐ 1880

ԹԻՒ 1137

ԱԶԳԱՅԻՆ

Մայրաքաղաքիս ազգային և օտար թերթերը
անուշանքն հետզհետէ Հայաստանի դժբաղդ-
ելոց համար եղած հազանաւոր թիւները,
մասնակից կըլան նաև օտարազգի մարդա-
կներ: Մարդասիրական պարտաւորութիւնը
անկան զգացում մ'է գրեթէ, զոր ամեն ոք
աննայ առանց ազգայնութեան կամ ցեղա-
ն խտրութեան, այսու հանդերձ, այդ զգա-
մը աստիճանաբար տարբերութիւն մը կ'ու-
նայ անշուշտ, և աւելի կըբախէ մարդու
կտրու երբ վշտին կամ տառապանաց զսնը իր
թոքաւորը ըլլայ: Զարմանալի բան սակայն, որ
նշուէր Մեծն—Բրիտանիա յանկարծ իր կա-
նիկից աչքերը կընկէ Ասիոյ աղքատ և անօթի
այոց վրայ, մինչդեռ ոսկիներ հաւաքելով մեր
աղայրներուն, մեր ազգակիցներուն, մեր արեւ-
ակիցներուն կըզրկէ որպէսզի ալիւր կամ հաց
են: . . . Տաճկաստանի հարուստ և անտաղնապ
աղաքները բնակող հայք՝ տակաւին իրենց
առասուճական բարան չեն ցուցած անօթի Հայ
կերակրելու համար: Խօսքերնս մասնաւորա-
պէս իզմիրի Հայոց համար է, իզմիրի Հայոց՝ որք
ազատէր մարդեր ունին, որք առատածեռն
նշխարներ ունին, որք իրենց Միւսթաֆէ Հայ Է-
նթալանց փառք խաղալ Բարձրադաս առաջնորդ մը
նշին Բրիտանիոյ աշակերտ, որք վերջապէս նը-
ստաւոր հարուստներ ունին, և դեռ փոքրիկ
թոքում մը չեն քրած իրենց եղբայրները կե-
տակող Անգլիացիին և Յոյնին հետ պատու մը
այ ալ իրենց զրկելու: Գուցէ, ոչ թէ անտար-
բերութիւն այլ չզիտութիւն մը ըլլայ այս, և
տակայն իզմիր աւելի մտէ Պօլսոյ քան թէ Լոն-
տոն ուր կըհաւաքուին սովելոց զրկուելու գու-
նարներ: Թող չգիտութիւն համարուի հոգ չէ,
և այժմ գիտակալով ի միտ բերուի թող, որ իզ-
միրի հարուստները, Ժանիթյօնները, ազգաւոր-

ները և Բրիտանիոյ աշակերտ մեր սրբազան և
բարի հովիւը ասոնք ամեն կրնան իզմիրի բոլոր
Հայ հասարակութեան կէս կէս հինգնոց հա-
ւաքելով քանի մը հարիւր վանեցի անօթի ըն-
տանիքներու հաց տալ: . . .
Հարուստ հայեր, հարուստ հայեր, ԱՂՔԱՅԻՆ
ՈՂՈՐՄՈՂԸ ԱՍՏՈՒՅՈՅ ՓՈԽ ԿՈՒՏԱՅ, Աստուած
որ աղքատը ստեղծէր է ձեր սնունդները լե-
ցունելու համար: . . .
ԼՐԱԳԻՐ կըսէ թէ, Ազգանուէր—Հայուհեաց
ընկերութեան երեք անգամուհիք վեհա. Սուլ-
թանին պալատն երթալով Օսման բաշայի ներ-
կայացէր և խնդրէր են Նորին վսեմութեանն որ
վեհափառ կայսեր բարձր հովանաւորութիւնը
հայցէ, իրենց տալիք պարահանդէսին: Կայսրը
բարեհաճէր է այս շնորհն ընել յեղեալ ընկե-
րութեան, որով ապացուցէր է Հայ ազգին վը-
րայ ունեցած իր բարձր համարումը: . . .

Յիշեալ թերթը կըմանուցանէ նաև թէ, Ս.
Պատրիարք հայրը Հայաստանի սովելոց թշուառ
վիճակը նկարագրող գիր մը ուղղելով վեհա.
կաթողիկոսին, և այս առթիւ հանդանակիչ
Յանձնաժողով մը կազմուած ըլլալը ծանուցա-
նելով, խնդրէր Ս. կաթողիկոսէն որ ինքն
ևս Ռուսաստանի ազգայնոց մէջ հանգանակու-
թիւն մը ընելու համար տնօրինութիւն մը ընել
բարեհաճի: Եղևոն և ի միտարութիւն վանայ
Ալաշկերտի և Պայաղլարի սովելոց: . . .

Տեղւոյս Հայ ընթերցատան Տնօրէն Խորհուր-
դը իր տարեկան շրջանաւարտութեամբ ըլլալով, նոր
խորհուրդ մը կազմուած է: Նախկին Խորհուրդը
որոյ յաջորդութեանն ու իր պաշտօնավարութեան
մէջ ցուցած ջանքի վրայ խօսելու պատեհու-
թիւնն ունեցանք ասկէ առաջ, իր միտման չըր-
ջանին հաշուէցուցակը հրատարակած է, որմէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ընդհանուր տեսութիւն ի նախնի եւ արդի վիճակ
Հնդկաբնակ ազգայնոց:
(Տես մախընթաց քիւր:)
Ի համարէն Հնդկաստան Մատրառ դրուէ զա-
ռաւելին տեղի պարձանայ սակա լինելոյն տուա-
լին ի յարուցանել գլխաւորայ ազգային լրա-
նութիւն աւարար և բանաւէր ի 1795 ամի:
Այսպիսի վեհանաճ հոգիք ի մերաշնաց կացին
աստ երբեմն և անցեալ հետզհետէ ելին յաշ-
խարհէ գոյից ճոխութեանց ժառանգք զտերուն
զըս խրեանց կարգելով կարծեցին և հայրենի
ազգասիրութեան լիցին նաև ժառանգորդք:
Այլ վերաբնացան յարձարուն յուսոյն զի բարե-
մասնութիւնը նոցին զանցին ի զաւակս և ի յա-
նորդս: որպէս ծախ անհետացաւ անբաւ ճոխու-
թիւն սերնդոց նոցա ի քաղաքէ աստի ընդ նմին
և առկածեալ ազգասիրութիւնն զի զսկիտեալ
ուսուց տեսչիւ զհետ նորաձե գաղափարաց զը-
րացեաց իւրեանց ծայրահեղմիշտ զառամեցան
և տակաւ առ ասակա կորուսին զվսեմ լաւու-
թիւնս հայրենաւանդ: . . .
Արդի վիճակ Հայ բնակչաց տեղւոյս չէ ասն-
պէս բարեկալից ըստ նիւթականին և ըստ հա-
ւատոց մասին չունին այնպիսի ջերմ զգացումնս,
թիւ հայազգի բնակչաց տեղւոյս է իբր 96:
Գուրէ. Այս քաղաք կառուցեալ ի ստորոտս
լիւն բարձու անուանի եղև ի վերջ կոյս զա-
րու բնակութեամբ մեծանուն ասպետի Յակո-

կըտեսնուի որ, ընթերցատան սնունդը նախորդ-
տարուէն աւելի գումար մը կըցած է ունենալ
նաև, ինչպէս որ կըսէ նախորդ Խորհուրդն իր
յայտարարութեան մէջ, իր պաշտօնավարու-
թեան օրով ընթերցատունը ունեցէր է ըստ բա-
ւականի բաժանորդ և յաճախորդ և ստացէր
է երկու հարիւր հատորէն աւելի գրեւորք, ու-
րոց ցանկը հրատարակեց ասկէ առաջ: Հայ հա-
սարակութեան կողմանէ շնորհակալեաց արժա-
նի է նախորդ Խորհուրդը, որ ըստ արժանոյն
վարած է իր պաշտօնը, աշխատելով աւելցունել
թէ՛ սնունդին գումարը, թէ՛ բաժանորդաց և
թէ՛ լրագրոց ու գրեւորք թիւը: Այժմ կըմնայ
մեզ նոր Տնօրէն Խորհուրդը, որոյ անդամոց ա-
նուանք հետեւեալ նամակին մէջ կըտեսնուին,
շնորհաւորել իր պաշտօնին մէջ և խրախոյս ու
յաջողութիւն մաղթել: Նոր Խորհուրդը անդամոց
ոմանք արդէն նախորդ Խորհուրդին անդամներն
են որմէ գիւրդին է գուշակել որ յիշեալ ու-
սումնաստնի և աշխատասէր երիտասարդք,
ինչպէս և իրենց ընկերք, օրով կընդունին միշտ
իրենց ազգին ծառայութիւններ մատուցանել,
ուստի կրնան վստահ ըլլալ յիշեալ հաստատու-
թեան բաժանորդք և հասարակութիւնը, որ
ինչպէս նախորդ տարւոյ նոյնպէս և ներկայ
տարւուան մէջ ալ զգալի բարեփոխութիւննե-
րով պիտի օժտուի ընթերցատունը, յոգուտ
ազգին բարոյական զարգացման: . . .

Կըյուսամք որ նոր Տնօրէն Խորհուրդը իր ու-
շագրութիւնը պիտի դարձունէ հետագայ ա-
ռաջարկութեանց վրայ, զորն ասկէ առաջ ալ
ըրած եմք:

Ա. Ընթերցատան սրահին մէջ դասախօսու-
թիւններ և առեմաբանութիւններ ընել տալ
ձեռնհաս անձանց: . . .

Բ. Ընթերցատունն իրեն անուան վայելուչ
վայր մը փոխադրել, որպէս զի կարելի ըլլայ
դասախօսութեան յարմար սրահ մը ունենալ:
Աւելի իրաւացի է ըսել որ ազգային վարչութիւն-

կառուցին հոյակապ եկեղեցին սուրբ Նազարէթ
անուան ի 1724 ամի յանուն աղա Նազարէթայ
հայկազունոյ փարթամ վաճառականի: . . .

Նշանաւոր վաճառականք էին աղա Պետրոս
Երուսթիւն, աղա Սարգիս տէր Յովհաննէս, աղա
Խաչիկ Առաքել, աղա Պօղոս Միքայելեան և այլք
բազումք: . . .

Ետպայ ժամանակ պանդխտացեալ գաղթա-
կանք Հայոց քաջիկ զգացեալ անժխտելի կա-
րեւորութեան ազգային ուսումնարանի միայ փու-
թան առատածեռն նպաստիւք հայրենասիրաց
կառուցանել զնայելն Բարձրադաս Զեմարան ի
1821 ամի: Վարժապետք կացին ի նմին հետ
զհետէ պարոն Յ. Յ. Աղանուրեանց, պարոն Յա-
րութիւն Գալուցեան, ապա գիտնական պարոն
Ավտարեան յընթացս իբր 40 ամաց, ունի սա
զքանի մի երկասիրութիւնս պիտանիս, բազում
եղեն գիտնական և նշանաւոր աշակերտք ել-
եալք ի սոյն ճեմարանէ, որք յաւելին զպարժա-
նքս մեր աղանց: . . .

Գիտնական պարոն Մեսրոպ Ղաւթի թա-
ղիդեանց ի 1834 ամի գայ ի սուրբն էջմիածնէ
ի Նորշուղա և վարժապետէ զամս իբր երկուս
յլմենափրկեան Դպրոցի անդ ապա լքեալ զայն
չուէ ի Հնդկիս ի կալիպթա, ուրանօր ընդ մե-
ծամեծ աշտոնութիւնգ մտաց յանձին բերեալ և
զհանձար բանաստեղծական փութաց զհանձա-
րոյն իւր ոչպա մատուցանել, ազգին յարուցանէ
իւրով ջանասէր հոգեով զսուրբ Մանդուկտ ու-
սումնարան օրիորդաց ի 1845 ամի և զարարա-
տեան ընկերութիւնն ընդ ազգասիրի Արարա-

նը իբր երկրորդական դպրոց կամ հասարակութեան ուսումնարան նկատելով ընթերցատունը, յատուկ չէնք մը կառուցանէր, բայց քանի որ այսպիսի բանի մը իրողութիւնը առ այժմ անյուսարի է, Տնօրէն խորհուրդը ըստ կարի փութալ պէտք է յարմար տեղ մը գտնելու:

Գ. Ինչպէս որ ասկէ առաջ պատեհ առթիւ խօսած էինք, գրքեր կարգաւոր համար զատ սրահ մը պատրաստել և թանգարանին մէջ փակեալ և բանտարկեալ գիրքերը հասարակութեան աչքին առջև դնել ըստ կարգի. թող չկարծուի թէ այս միջոցը կրնայ ֆիստ հասցունել թանգարանի հասցիին, վասն զի գիրք դուրս տանելով կարգաւոր ուղղող կրկին իր բաժնէ գինը տալով կըտանի:

Գ. Որեւէ գրքի մը պարունակութեան և օգտին վրայ ճառախօսութիւն ընել տալով, նոյն գրքին ընթերցումը փափաքելի ընել:

Ե. Յատկապէս սրահ մը ունենալով, անմեղ զբօսավայր մը յատկացունել, որով թէ իրիկսենները և թէ կիրակի և տօն օրերը բաւական հասցի կրնայ գոյանալ ընթերցատան:

Մեծ. Խմբագրութիւն Արշալոյս լրագրոյ,

Քաղաքիս Հայ ընթերցատան նախկին Տնօրէն խորհուրդը հրաժարած ըլլալով՝ նոր գործադիր ժողով մը կազմուեցաւ, որոյ անգամքն հետեւեալքն են.

- | | |
|-------------|-------------------|
| Աւետիսի | Պ. Յ. Աղաճանեան |
| Աւետիսի | Մ. Սիմոնեան |
| Գաւթի | Ա. Գ. Պերկամարեան |
| Թանգարանայի | Ա. Կ. Աղազարեան |
| | Մ. Ս. Մանեան |
| | Թ. Յ. Բուժայեան |

Կրննոյ բեմք որ այս նոր ընտրութիւնը հաճիք Ձեր պատուա. թերթի միջոցաւ հրատարակել:

Գործադիր ժողով

Հայ Ընթերցատան Զմիռնիոյ

ի Քաղաքիս, 23 Յունվար 1880

Ստեփան Եփէնտի Արղուման, որ գաւառիս գաւառաւոր ընդհանուր վերատեսուչ (Ատլիէ միւլթիթիթի) էր, Յունվար 29 չորեքշաբթի կէսօրին ժամը երկուքին իր մահկանացունքեց հրաժեշտ տալով աշխարհի, ի մեծ սուգ իր ընտանեաց և քաղաքիս բոլոր հասարակութեան:

Արղուման Եփէնտի մահուամբ մեծ կորուստ մը կրնն թէ Հայ ազգը և թէ օսմանեան տէրութիւնը, վասն զի առաջինը իր նշանաւոր և

տեան լրագրոյ ցամա 1852 երկասիրէ զբաղում պիտանի դրեանս վախճանի ուր ուրեմն ի Շիրազ ի 1859 ամի: Յայտ քաղաքի պարծանք եկաց ազգիս հայրենասէրն Յարութիւն Արգարտան որ ի 1795 ամի ելեալ ի Զուղայէ դիմէ ի Հնդկիս բարեբաստիկ վիճակիս բաղդիս ի 1840 ամի հաստատէ զընկերութիւնն կոչեցեալ Աբգար և Կուժպանի, և ապա ի ծովացեալ փարթամոյ իւրում, ուշ ի կուրծս նորա անկեալ հայրենիս իւր Զուղա բարեհաճի հաստատել անդ ի մշտաշուշ յիշատակ նախանձելի գործոց իւրոց զհայկեան հայրենասիրական դպրոցն, և զինի բազմապիսի բարեմասնութեանց պերճ հանգիսից հանգիսի տէր ի 1863 ամի:

Նոյնպէս աղա Յովհաննէս Էլիազեանց իւրով հայրենասիրական գործովք բարեպաշտական ազգի ազգի պերճ հանգիսիւք և առատապարգեւ օժանդակութեամբ ի յոյով կարեւոր ազգային գէպս արժանանայ խորին երախտադրութեան Հնդկաբնակ ազգայնոց:

Մինչև ցայս վայր ուրախականք էին տեսուութիւնք այլ որ ինչ այժմ առաջիկայ ինձ պատմել չիթս ուրախուաց յորդատառատ տաղէ հեղու ազգասիրաց: Սակաւուք յառաջ յայտնիկերոնի ազգութեան մերումընդ աղօտ կայծէր տակաւին մնացորդ իմ մեծաշահ փառաց նախորդաց, այլ աւանդ զարգիս աւանդի գէպք և պատահարք ստուերածս ամին յոյժ զնորք: Ամենայն ոք խօստովանիցէ՛, անշուշտ զի արդի մեծութիւնք, եկեղեցի ուսումնարան պատք և այլն փշուրքին հացալից սեղանոյ մե-

կր պատուոյն վայլ մը տուող անդամն ինչ մը կըկորսնցունէ, իսկ երկրորդը, երկար տարինեքէ ի վեր իր ժիր և բաղձարդիւն պատենայներէն մին: Արղուման Եփէնտի, որ գրեթէ 60 տարեկան հասակին մէջ իր յետին ուղիոյն տըւաւ այս արտասուաց հովտին, իր երիտասարդ հասակէն ի վեր մեծամեծ և բարձր պաշտօններ կատարած է տէրութեան, և իր անցեալ բաւական մեծ էջեր պիտի բռնեն օտ. պետութեան տարեգրութեանց մէջ: Նորա մահը, որ անակնկալ և յեղակարծ եղաւ, կրնայ ըստիւր քաղաքական միջոցներէ առաջ եկաւ, վասն զի թէ և ունեցած ըլլար յօգացաւ մը, բայց իր սիրելի տէրութեան շահուց պաշտպանութեան պարագայ մը շարժառիթ եղաւ նորա զգայուն սիրտը վրդովելու: Երկու ամիս շարունակ բարոյական տկարութիւն մը իր մարմնական տկարութեան անդի տուաւ, վերջապէս իր վերջին օրուան առաւօտուն իր ընտանեաց քով սովորական ճաշն ընելէ և նոյն իսկ իր հրամանաց տակ գտնուող պաշտօնէից հրամաններ ընելէ ետեւ, տարապայման խռովում և անհանգստութիւն մը կըզգայ սրտին մէջ, արեան կեդրոնը կըզգար իր պաշտօնը կատարելէ, և կաթուածը կուգայ անոր սուղ օրերուն վերջ տալու: Արղուման Եփէնտի կըթողու իր ետեւէն իր շնորհափայլ տիկինն ու երկու զաւակներ, որք իրենց փոքր հասակէն կըցցունեն թէ օր մը արժանի ժառանգներ պիտի հանդիսանան իրենց բաղձալիստ հօր: Բարեկիշատակ պաշտօնեայն օժտեալէր բազմաթիւ պատանշաններով, որոց մէջ կան թէ օսմանեան և թէ եւրոպական զանազան տէրութեանց շքանշանք:

Այսպէս երբ նորա մահուան գոյժը տարածուեցաւ քաղաքիս մէջ, ամբողջ ժողովրդոց հասարակութիւնք ցաւ ի սիրտ պատրաստուեցան իրենց յետին յարգանքը մատուցանել անոր դագաղին, նորա արժանի յուղարկաւորութիւն մը ընելով, որ կատարուեցաւ հետեւեալ օրը, կէսօրէն ետեւ ժամը երեքին: Նախ զինուորներու խումբ մը կընթանար, որոյ կըհետեւէին քաղաքապետութեան զօմիսէններն ու Առևտրական Ատեանի գաւառները, անմիջապէս ետեւ կուգային դպիր մանկունք և քահանայից դասն զգետաւորեալ, որոց կըհետեւէին սրբազան Առաջնորդն ու երկու վարդապետք: Դագաղին առջևէն կերթար Ստեփանեան կարապետ Եփ. որ կըկրէր հանգուցեղոյն պատուանշանները: Դագաղը կըփայլէր իր ծոցի աւանդին համադ-

րոց նախորդաց: Այժմեան նշխարեալ մնացորդք նոյնին ճառքաղք զուրկ քաղաքային բարեմտութեանց ի ծայրագոյն աստիճանի գտանին օտարասէրք և նորաձեւ գաղափարաց օտարոտեաց ցանգ հակամիտ: Մեծի մասն նոյնին թէ և ոչ ամենքին ի մոռացոնս լարկեալ զպանծալի լեզուն Հայոց (զորոյ փառք ոչ գլխոցէ օտար լեզու յաւիտեան) նախամեծար համարին զԱնգղիացեղոյն երկեան սրուելին բարբառ և ընդնմին ի մոռացոնս ձգեալ զազգութիւն որ երթեալ սուգանի ի վիհն կորստական: Միշտ և հանապաղ ազգային լրաթուղթք սէր և միաբանութիւն քարոզէն ազգին, բայց որ ոչ ճանաչէ զանձն և զազգութիւն նմա սէր ուստի: Ազգային ուսումնարանն երբեմն պարծանք համօրէն Հնդկաստանի յորդային կայ զարգիս խոնարհեալ ի վիճակ և ոչ է հեռի ժամանակն (պժգալի կանխասացութիւն) զի ամենայն ստուերացեալ փառք արդի դրութեան նորին յիսպառ ի չքութիւն խոնարհեցի ի ցաւ սրտի ճշմարիտ ազգասիրաց: Չունի վարչութիւն ինչ օրինաւոր չիք բնաւ ազգային քաջաշքութիւն՝ միայն դայթ ի դայթ ընթանայ քանի մի Զուղայիցի տղայիւք: Ընդ այսպիսի աւանդելի հանգամանօք (զորմէ լուին խոհեմութիւն) բարձիթողի լինի ազգային պերճ հաստատութիւնն, միմիայն ապաւնէն անպահովութեան ազգութեանս ի Հընդիկս յերեսաց անպառա սպաւնալեաց ազգախառնութեան ընդ քաղաքակիրթ գրացեաց:

Ըստ նիւթականին արդի բնակիչք աստի ընդհանրապէս խօսելով բարեկեցիկ վիճակեալ կան

դետով և թուրով, որոյ կըհետեւէին վաւառ Տիրան Եփէնտի թագապետն, հիւպատոսը հիւպատոսաց ոմանց թարգմանք, այլեայլ բարձրագիւր պաշտօնեայք, մեծագիւր անձինք և ամեն ազգի խուռն բազմութիւն մը: Այսպէս առաջնորդուեցաւ միջև Ս. Ստեփանեան եկեղեցին, ուր Ս. Առաջնորդը դամբանական ճառ մը արտասանելով յայտնեց ժողովրդեան անոր բարեմասնութիւնները, անոր ծառայութիւններն ու պաշտօնները: Մարմինը ամփոփուեցաւ յիշեալ եկեղեցւոյ գերեզմանատան մէջ:

Իզմիր գերեթէ իր բուն զաւակը կորսնցուց, Արղուման Եփէնտին կորսնցունելով, վասն զի բարեկիշատակ հանգուցեալը իզմիրի կըպարտաւորէր իր պատանդութեան նախնական ուսմունքն ու կրթութիւնը:

ՍՈՍԿԱԼԻ ՈՃԻՐ ՄԸ

Յունվար 20, կիրակի գիշեր Գարաթաշարու արձանը քոտմնելի ոճրի մը թատրը կըհանդիսանայ: Քանի մը չարագործներ 18—20 տարեկան յոյն պատանի մը կըմորթեն սրճարանի մը մէջ որոյ տէրն էր դժբաղք զոհը: Սոյն եղեւնի մանրամասնութիւնները հետեւեալ կերպով կը պատմուին: Ընդհանրապէս ժամանակին Գարաթաշի ծովեզերքը անցունող չորս թափառայած յոյն սրիկայներ, որոց մին արդէն ծանօթ է նոյն թաղեցւոյ իր անցեալ չարագործութիւններով, յիշեալ գիշերը առաւօտին մօտ, սրճարանին դուռը կըզարնեն, և մինչ տղան արթննալով դուռը կըբանայ, առանց գիտնալու անշուշտ որ մահուան գիւղը կըվազէր, չարագործաց երեքքներս կըմտնեն և մին դուռը կըսպասէ հսկողի պաշտօնով: Նախ զըժբաղք տղային կուրծքը կըծակեն գանակով, և ապա կատրութեան և խուլ կրից թելադրութեամբ արգիւն գառնուկի նման գետին տապալելով գուլիսը կըկտրեն եզիկի պատանիին որոյ գիտիլ սրճարանին մէջ փռուած կըգտնուի առաւօտուն, և յիշերային զգեստներով և գետաք արեան մէջ թափախեալ: Սպանիները, որոց սիրտը պղնձեայ կամ երկաթեայ է անշուշտ փոխանակ խոյս տալու կամ պահուելու, բոլորովին անզգայ իրենց այս անուր վայրագութեան վրայ, բուն իրենք կըգուժեն առաջին անգամ թաղեցւոյ այս արկածը, մոռածելով անշուշտ թէ, այս կերպով կրնան ծածկել իրենց մահապարտ յանցանքը, սակայն արգարութիւնը չուտով շանթահարեց զիրենք, ոստիկա-

բաղդի: Գտանին ի նոսա արքա կանաւորք որք ոչ ձեռնամուկ լինին յազգային իրողութիւնս ի պատճառս ձեռն երեցութեան քանի մի խառնիճաղանձս սինըրոց թիւ հայազգի բնակաց աստի է իւր 710: Զիցս էր սա յուլիտասներորդ գարու կարի յառաջագէմ և կային ի նմա բաղում տունք յազգէ Հայոց, զարգիս ոչ ոք ի մերազանց գտանի ի նմա: Ունի մի հոյակապ եկեղեցի կառուցեալ յանուն սրբոյն Յովհաննու ի 1695 ամի, ուստի և երեւի զի առաջին գաղթականք Հայոց աստ արարին ինքեանց տուն և եկեղեցի, բայց դարն անագանեալ զանայ ընծայել մեզ զուղեկութիւն ինչ զնոցանէ: Սակս չլինելոյն սեփական ժողովրդոց աստ կառավարութիւն սուրբ եկեղեցւոյն կանեալ է ըզպաշտօնատարաց նաղ: սուրբ եկեղեցւոյն կալկաթու:

Դաս կարի յառաջագէմ գտաւ աստ աղա Յարութիւն Միքայէլեան, որոյ անբաւ ճոխութիւն սպառեցաւ որպէս ծուխ զինի մահուան նորին ի 1824 ամի: Կալուածատեարք եղեն մեծ մասն ի Հայ բնակաց տեղոյս, և կարի յաջորակ վիճակեալ բաղդի: Սերունդք նոյնին թէ և առ ժամանակ ինչ վայելեցին զպատուս արքեանց վաստակոց նախնեաց իւրեանց, սակայն ըստ բերման ժամանակին ապականեալ բուսոյ բարուց նոյնին, հարուածս սաստիկս ընկալան և սոքա կորուստմբ ընչից իւրեանց: Եկեղեցիք կառուցաւ ի 1781 ամի, յանուն սուրբ Յարութեան, անշուք վիճակեալ կայ բաղդի, ազգային նպաստից կարողաւոր:

նույն ժամանակ հասնելով մերձակայքնակութիւններէն քանի մը անձեր ձերբակալած ատեն բռնակցեց նաեւ դուռնակները, որք չեն կրցէր ծածկել իրենց ոճիրը նախնական հարցաքննութեան մը առջեւ, թէ և ամենքն ալ ինքզինքնին արդարացունել փորձէր են յանցանքն իրարու վերադրելով: Թաղեցւոյց սմանց պատմածին նայելով այս սպանութեան շարժառիթը խիստ աննշան դէպքէ մը առաջ եկած է, որմէ կրտսնուի թէ որքան մարդակերպարան գազաններ կ'ստնուին աշխարհիս մէջ, որք լոկ շարութեանց մեքենայներ ստեղծուած են կարծես, և թէ ինչ սոսկալի եղբունի կրմիէ զանոնք բարուց անմշակութիւնը թափառաշարժութիւնը և ասկէ պատճառեալ չքաւորութիւնը: Մորթելէ քանի մը օր առաջ մարդասպանը երկու հարիւր դահսկան փոխ կողմէն Եօրիկէն (այս է զոհին անունը) որ կըմերժէ անոնց խնդիրը, գիտնալով ի հարկէ որ չպիտի կրնայ վերստանալ տալու ստակը, ուստի տղային այս մերժումը տեղի կուտայ ըստպանչաց անողոք և անիրաւ ռեակտիվութեան և հետեւաբար իր մատաղ կենաց այս եղերական վախճանին:

Լրագիր հետեւեալ լուրերը կըհրատարակէ, ընթերցողը կըյիշեն թէ՛ Ս. Պատրիարքը վերջեւ քանի մը կարեւոր խնդրոց կարգադրութեան համար թագրիրներ գրած էր Բ. Դուռն Այս անգամ Դրենէն պաշտօնագիր մ'եկեր է Պատրիարքարան, ծանուցանող թէ վանայ, Ալաշկերտի և Պայազլիի սովետաց համար Բ. Դուռն խորհրդի և խնուսի կառավարութեանց հրաման գրկեր է. որ անմիջապէս 13,000 գրիւ ցորեն զրկեն հոն, հարուստներուն ստակով ծախելու և աղքատաց ալ ձրի բաժնելու համար: — Բիշեալ գիրը կըծանուցանէ նա ևս թէ, պատերազմիատեն բանակին պարէն և պաշար տալով առնելիք ունեցողներուն պահանջքը՝ տուրքի տեղ ընդունելու, իսկ անկարողներուն տուրքերն ալ մաս առ մաս ուղելու և առնելու հրաման զրկուեր է: — Ասոր վրայ Ս. Պատրիարքը Դերջան և Եւրիշ տեղեր հեռագրեր է որ այն բարեաց համար Սուլթանին կենացը ազօթք ընեն:

— Կըսեմք թէ Ս. Պատրիարքը, փրկչի հիւանդանոցը դուռնած կորին վարդապետին նախագոյն խնդրանացը համեմատ, եկեղեցական կարգն ու աստիճանը առնելով երէկ ճանբեր է: — Վսեմա. Սարգիս—Պէյ Պաշան երէկ 50 ոսկի զրկեց Ս. Պատրիարքին՝ սովետոյ ի նպաստ:

Թիւ հայագրի բնակչաց աստ հաշուի այսպէս որուք իւր 76 էդք 41 բոլորք 117:

Ռաֆայէլ Գաղաթ ի Բրմանստան ի վերջ կոյս դարուս ծաղկեալ վաճառահաշուութեամբ ընդ տիրախնամ աշուրութեան մեծին Բրիտանիայ:

Թառաջագէմ գտան աստ նոյնպէս և հայք չահափաճառութեամբ պատուական ականց և գոհարաց: Անիւ յաջողութեան նոյն յաջողութեամբ բարեաց ի յառաջագէմ կոյս հորովեցաւ ընդ երկար, բայց հրկիզութիւնք տեղոյն ի ժամանակ ժամանակ յողբալի ձգեաց զնոսա ի վիճակ: Չարդիս հայք տեղոյն, թէ և ոչ այնչափ վարթամ պարապին ի տուրեառս վաճառաց: Ունին զի եկեղեցի կառուցեալ վերստին ի 1867 ամի յանուն արքայն Թովհանու: Հայագրի բնակիչք ի սմա զարդիս հաշուին գոլ աւուք իւր 144 և էդք 94 բոլորք 238:

Պէնապ. կղզի փոքրիկ, ուր գտանի երեւելի դերդաստանն Թարութիւն Անտոն անուն: Ունի զմի եկեղեցի կառուցեալ ի 1822 ամի յանուն արքայն Գրիգորի Լուսաւորչի, այլ զարդիս ոչ գոյ աստ վիճակաւ քահանայ ի պատճառս նուազութեան եկեղեցական եկամտից այլև յաւէտ ժողովրդոց: Հաջիւ 10 հոգիք Հայք գտանին աստ: Որչափ կենդանի էր հայր միակ դերդաստանիս վառուն էր նոյնպէս ի սոսա սէր աղքատութեան և կրօնի, այլ ընդ բառնալ կենաց նորին բարձաւ իսպառ ի նոցանէ և սէր աղքատութեան:

(Մնացեալն յաջորդ քոռով):

— Գոհութեամբ իմացանք թէ այս կիրակի օր Հայաստանի սովետոյ ի նպաստ Խաղաղի մէջ թաղային մասնախմբին ձեռքը եղած հանգանակութիւնը 55 ոսկոյ հասեր է, որոյ 40 ոսկին երէկ թերհաշիւ նպաստի կեդրոնական յանձնաժողովոյն յանձնուեր է:

— Պրոսպի առաջնորդ գեր. Բարթոլոմէոս սրբազանը, որոյ մայրաքաղաքս հասնիլը ծանուցիւք, առջի օր անդղ. դեսպանին այցելութիւն մը առաւ:

ՆԵՐՔԻՆ

Առաջին նախարարութեան կողմանէ կըծանուցուի գաւառաց, որ անցագիր (եօլ թէզքէրէսի) փնտռելու սովորութիւնը, որ բարձի թողի մնայած էր քանի մը ատենէ ի վեր, կրկին պիտի սկսուի զորդ դուրիւ, և այս պաշտօնը պիտի յանձնուի իւրաքանչիւր քաղաքի ոստիկանապետին, որ իր հրամանին տակ պիտի ունենայ մէկ կամ երկու զրապի: Անցագրերէն դոյացած հասոյթին մէկ չորրորդը գրադրաց ամառականին պիտի յատկանայ, մնացած երեք մասն ալ տէրութեան զանձին:

Ոստիկանութիւնը ազդարարութիւն զրկած է Կիւլիեան ցաղոր էֆէնտիի որ կէտիկ Բաշայ-Օսմանիէ թաւորոնին վրայ հայ և յոյն լեզուներով ներկայացում չտայ, այլ միայն տաճկերէն լեզուաւ:

Պաղտատի, Դամասկոսի, Իզմիրի, Տիգրանակերտի և Սէլանիկի մէջ կալթա Սէրայի նման դպրոցներ պիտի բացուին: Վեհա. Սուլթանը հրաման ըրած է հասարակաց կրթութեան պաշտօնէին որ փութայ այս ձեռնարկութեան սկսելու, ուստի պաշտօնեայն արդէն սկսած և վերոյիշեալ քաղաքաց կառավարութիւններուն սողաբարած է որ եթէ այդ շինութեանց յարմար արդէն պատրաստ չենքեր կան իմացունեն իրեն:

Հասարակաց կրթութեան նախարարը պաշտօնապէս կ'արգիլէ այսուհետեւ Տաճկաստանի մէջ գոշակութիւններ պարունակող օրացոյցներ և զազմամիսներ հրատարակելը, որք ժողովրդեան մէջ խռովութեանց տեղի կուտան: Կըպտոսիլիէ նոսե որ հրատարակուած օրացոյցները օտար երկիրներու հրատարակածներուն նման ժողովրդեան օգտակար զրուութիւններ պարունակեն:

Վանայ և Շքօտայի կառավարութեանց խնդրանաց վրայ, կայսերական կառավարութիւնը կըծանուցանէ որ, մինչև Սեպտեմբեր ամիս Ալպանիա մտնող ցորենները ազատ են մաքսային տուրքէ, նոյնպէս ազատ է այդ տուրքէն մինչև Մայիս հոն մտնող եգիպտացորենը: Այս տրոց ազատութիւնը կայսերական իրաւէին հրատարակութեան թուականէն պիտի սկսի:

ԴԻՏԱԲԱՆ ՈՒԹԻԻՆ

Յայտնի է թէ որքան նախապաշարուումով լի երկիւղներ առաջ եկած են բնական, երկրային և երկնային երեւոյթներէ, որք մինչև այսօր տեղի կ'ունենան գիտութեան անվարժ մտաց մէջ:

Առհասարակ անձանթ մնայած են ամենուն յունական նախնի բաղմաստուածութեան նշանակութիւնն ու իմաստը: Նախնի յոյն ժողովուրդը լաւ բմբունած էր, թէ բնութեան այդ սարսափահար և զարհուրելի երեւոյթից մէջ բռնա հակառակութիւն կամ աւերիչ ընդհարում մը չկար, թէ բնութեան այդ երկանց տակ խորհրդաւոր իրողութիւններ և պատճառներ ծածկուած էին: Յոյն բաղմաստուածութիւնը Պարսից կամ այլոց նման երկու սկզբունք չէր ենթադրէր բնութեան մէջ, որոց մին բարի և միւսը չար ըլլայ, չէր ընդունէր նաեւ որ տարերք իրարու հակառակ ըլլային, այլ կընդունէր և կըծանչար թէ հակառակ սկզբունքներ կամ նիւթեր հաւասարապէս անհրաժեշտ հարկաւորութիւններ էին, և թէ երկու հակառակաց միութեանց կըծնէր սիեզերական ներդաշնակութիւնը, ինչպէս որ արդի գիտութիւնն ալ ըն-

դունած է այս սկզբունքը: Յոյն բանաստեղծը կամ գիցարանը առասպելով մը կայարաններ բնութեան այս գաղտնիքը: Այսինքն Արէսի և Ափրոդիտէի ազդիկն եղող ներդաշնակութիւնով, Արէս և Ափրոդիտէ՝ Հեփեստոսի աներեւոյթ ունականին անլուծելի հանգոյցներուն մէջ միացած են, բոլով կըցցունեն թէ աշխարհս գոյ է աստուածներու միութեան և պատերազմէն, այսինքն տարերց հակառակութեան և միաւորութեան: Հրաբխից և երկրաշարժից նկարագրութիւնը ճիշտ յունական դիցաբանութեան կըմղէ մեր միտքը: Դժբաղդաբար արդի աշխարհին աշխարհը կրօնական նախապաշարմամբ վարակուած կըկարծէ յանգէտ, և շատ գիտնէր առանց դատողութեան և առանց քննութեան, մարդ կային մտաց այլանգակ միջոցութիւններ ըլլալ կըկարծեն Դիցաբանութիւնը և չեն դգար որ՝ անոր բոլոր առանգութիւնները բնութեան և մարդկային ցեղին ճշմարիտ նկարագրութիւններն են, զորս կըպարտաւորուի պատկառանք ընելու և ունելու: Իրաւ է որ նախնի յոյնք այլոց նման շատ սխալ քայլեր ալ առած ըլլան, բայց անոնց բնութեան նկատմամբ ունեցած հմտութիւնները և գիտութիւնները կըհաւասարէին հին Եգիպտոսի և Եբրայեցւոց, և ասոնց նման ընդարձակ և բարձր ծանօթութիւններ ունէին զորս մենք կարող չեմք լուծելու: Անոնց ունեցած այդ հմտութիւնը պատմութեան մէջ այլաբանական, նշանաբանական ձևով ներկայանալուն համար այլանգակ կըթուին մեզի սակայն երբ խորհրդապահ վարագոյրը վերցունելով մերկացունեմք անոնց կերպարանքը, այն ատեն կրնամք հասկնալ թէ ինչ կըհասկնային անոնք: Գիտութիւն ըսելով: Չօրութիւնք և Օրէնք, որք ըստ իրենց կարգի երկնային կերպարանքներ առած կամ զատ զատ աստուածներ է ներկայացուած են, բոլորն ալ իրենց գաղտնիքը պարզած էին յոյն բանաստեղծից և Եգիպտական դափիւրայից առջև: Ինչպէս կարելի է չեբեալայել Տիտաններու՝ աստուածոց հետ ըրած պատերազմը երբ տեսնեմք հրաբուխներն ու երկրաշարժները, որոտմունք ու փոթորիկները: — Անսահման ծովէն հանդ և սոսկալի դըղրիւն մը կըբարձրանայ, երկերը հեռուէն կըգոռայ, անպայման երկինքը սասանելով կըմըռնէ, և մեծատարած Ողիմպոսը հիմամբ կըսարսի անմահից ընդհարումէն: ... Ահաւասիկ Տիտանները կըպատերազմին աստուածոց հետ և Արամագը շանթահար կընէ զանոնք: Ձեւ՝ Հեփեստոսի այս պարբերութիւնը լուծելու ուղեով՝ Հեկատոնհիւր(1) հակայնքը իրեն օգնութեան կոչելու ստիպուեցաւ զորս Տարտարոսի զնդանէն կ'ազատէր: Այս պատերազմը ուր ներկայ են բոլոր տարերք, ուր երկինք և երկիր կըսասանին և մէն մի աստուած ներկայող մանչիւններ կըհանեն, բնութեան ծոցը գտնուող ֆիզիքական գործիչներու հակառակութիւնը կըցցունէ: Այս երկնային ճակատամարտին մէջ Ողիմպոսի թագաւորը իր բոլոր զօրութիւնը կըտարածէ, կըսարսայ երկինքէն և Ողիմպոսէն և իր ուժգին ձեռքէն փայլակ, կայծակ և արագասահ շանթեր կըթռչնի, որ կըբազմապատկին՝ ամենուրեք նուիրական բոցը տարածելով: Արգասաբեր երկիրը՝ բռնկած կըմըռնէ, և հեռուն անհուն անտառը կ'արճատէ կրակին տակ: Հողը կեռայ նոյնպէս ուկիւնոսին ալիքները և անյատակ ծովը: Եւ տաք շոգի մը կըշլջապատէ զանոնք, — երկնային Տիտանները, անհուն բոցը դէպ ի երկինք կըբարձրանայ: ... հրդեհը՝ կըլափէ ահազ անդունդը: Լսելով և տեսնելով այսքան աղաղակ և բոց'երկինք և երկիր իրար կըխառնին: Երկիրը կըբռնկի, երկինք հուրը մինչև ի փառս կըթափանցէ: Հարիւրձեռնայ հակայք (հողմունք) հեռուէն ժայռերու կարկուտ կըթափեն որոց ներքե կընուածին Տիտանք, և երկրիս տակ կըգահաւիժին ուր կըբռնակին յաւիտենական գիւղերի մը մէջ թաղուած: Այս զար-

1) Հեկատոնհիւր (հարիւրձեռնայ) հակայնք էին, որք երբեմն հողմերը են երբեմն ալ ծովուն ալիքները կըներկայացնէին: Տիտանները հուրերը կանձառարեին որք երկրէս կեղեկն երկնից դեմ պատերազմելու համար:

Հուլիսի վայրը գոցուած է պիսիկայ դռներով զորս անցուցած է ծովուց աստուածն եղող Պոսիթոն: Յունական բաղմաստուածութիւնը, որոյ խորհուրդին տոգէտ է առհասարակ ամեն մարդ, և որ բոլոր կրօններու վարդապետաց կողմանէ զրպարտուած և անարգուած է, իբր մարդ կային մտաց մի ահեղ մոլորութիւն ներկայացուած է անգիտօրէն, վասնզի այդ վարդապետք գաղթած չեն միշտ մոլորութեան և սխալանաց ենթակայ ցցունելէ մարդկային բանականութիւնն ու իմացականութիւնը՝ որ զԱստուած կը ներկայացընէ և զոր Աստուած իր պատկերին նման ստեղծած է . . . : Եւ սակայն, զարմանալի՝ զուգարդիպութիւն, որ ինչքան նոսրին Յունաստանի հին երկնայնութիւնք աւելի լաւ կը պարզուին և կը ճանչցուին, այնքան ալ առնոց մէջ բարոյական և գրական անկարծելի գեղեցկութիւններ կը դնուին, ասիէ զատ ներկայ դարուց գիտնականք ևս իրենց ճշմարիտ նախորդները նախնի յոյն բանաստեղծից մէջ կը գտնեն: Միւս կողմանէ, երբայեւոց հին գրութիւնք և դրութիւնք, թէ և ըստ երևոյթին ներհակ, կ'իմացուեն և յուշ կ'առնեն զնոյն մտաց բազմադիմի պայքանութեամբ, որ բնութեան և բնականութեան վերջին սահմանը պահած են իրենց խորհրդաւոր գոգին մէջ, և կուտան անոնց Բացարձակին, Անվերջանին և Անսահմանին ձեւը, եթէ երբեք կրնան տոկալ այս գաղտնեայ ծանրութեան տակ: Անյուսարի և անհնարին է որ յունական Ողիմպոսին յաղթուած և մոռցուած աստուածները կրկին վերագառնան, սակայն ընդմիջեալ աւանդութիւնք կարծես նորինորոյ կենդանութիւն կառնեն բնութեան զանազան երևոյթից գոյութեամբ և նախնի բնապաշտութիւնք՝ երբեմն իր ալեւոր գլուխը ցոյց կուտայ հրաբուխներու, երկրաշարժներու, փոթորիկներու, և կայծականց պատճառած կորուստներուն կամ զարմանալի օգուտներուն տակէն, և կարծես գիտութեան անկորնչելի տաճար մը շինել կուզէ:

Կ'իմանամք թէ, Եգիպտոսի նախորդ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Գահրէի եկեղեցւոյ սպասները Խֆ-Խֆ-Խֆ էր է, պատրուակելով թէ առնելիք ունեցած ըլլայ նոյն տեղի ազգային անտուկէն: Եպիսկոպոսին այս անվայել ընթացքը, որ պարզապէս օրբապղծութիւն մ'է, և կրկնակի մեղապարտ քանի որ բարձրաստիճան եկեղեցական մ'է, արժանի է ազգային կեդրոնական վարչութեան ուշադրութեանը:

— Թէրճէմալ Մաթէն առնելով կըսէ թէ, Պէրդողի քարոզիչ վրթանէս վարդապետ, անցեալները Լատինացւոյ մը հարսանեաց երթալով կ'արբենայ, և կերակրոյ տտեն զիս վար տեղ նստեցուցիք: Ըսելով Լատին քահանան կը թըշնամանէ: Խնդիրը կը մեծնայ, և զինուոր կը կանչուի, սակայն յիշեալ վարդապետը գիտութեամբ ալ թշնամանքներ կ'ուղղէ և զինքը դուրս հանել ուղղորդուին հետ կը մեծ կուլի, վերջապէս թաղական խորհուրդը վրայ հասնելով դուրս կը հանէ վարդապետը: Մաթի կը յաւելու թէ, կըսէ Թէրճէմալ, ամուսնացողը ծեր Լատինացի մը և աղջկին ալ Հայ ըլլալով յիշեալ վարդապետը աղջկան տունը կը յաճախէ եղէր:

— Ուրախութեամբ կը կարգամք Թէրճէմալը Էֆէնդի մէջ թէ, ինք մը պապական հայեր անցեալ կիրակի օր բարձրաշնորհ Ներսէս արքայան Պատրիարք Հօր գիմելով Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ գիրկը մտէր և արձանագրել տուէր են անունին, որք են Եաղղեմեան Պետրոս և Յովհաննէս աղաները, Թէրճէմալը Էֆէնդարի արտօնատէր Սաբայեան Անտոն Էֆէնտի և սորա երկու եղբայրքը Վիլէն և Ռոպոս և ընտանիքը, հռովմէական Հայոց Պատրիարքարանի ժամկոչ Բրզնիքցի Աստուածատուր աղա և ընտանիքը, Չըմմար վանքի միաբաններէն երկու գոյիւր եղբայրներ, և Ստեփան Էֆէնտի Էքչեան:

— Հայաստանի սովելոց համար Պէյօղլուի մէջ կազմուած յանձնաժողովը նոյն թաղին առնելով պարտելով 300 ոսկի հաւաքէր է: Յանձնաժողովը անգամք են Մկրտիչ Եսայեան, Գեորգ

Սամանճի, Գրիգոր Կիւմուշկէրտան և Խաչիկ Հաճեան Էֆէնտիները: Նոյնպէս Վարնայի հայ ժողովուրդը 100 օսմանեան ոսկի զրկէր Էֆօլոյ կեդրոնական Յանձնաժողովին, սովելոց զրկուելու համար:

— Կ'իմանամք որ, իւսկիտարի Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ Ճերմակեան գեր. Մեսրոպ վարդապետ էտիրնէի առաջնորդ ընտրուելով մօտերս իր պաշտօնատեղին պիտի երթայ:

ՏԵՂԵԿՆԵՐ

Մեծ Խմբագրութիւն Արշալուսոյ

Քաղաքիս Հայոց Ս. Լ. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը քաղցր պարտք կը համարի իւր խորին շնորհակալութիւնն ձեր թերթի միջոցաւ համարձակօրէն մատուցանել այն ամեն բարեպաշտ և ազգասէր աղայից և տիկնայց, որք իւրեանց առատասիրտ նուէրներով պատուեցին սոյն յարկի տակ պատասխարուող հիւանդներին, անկեղծներն և անօր խղճալիներն: Յուսով եմք մեծ Խմբագիր, որ դուք ևս, մեր ձեզ ամէն ամիս մատուցած, նուիրատուաց ցանկն ազգասիրաբար կը հրատարակէք ի գիտութիւն աղայից, յապահովութիւն նուիրողաց և ի քաջալերութիւն ողորմասիրաց:

Ահա 1879 Ապրիլ 30էն սկսեալ մինչև Յուն. 30 ընծայաբերաց ցուցակն հանդերձ նուէրներով (Տարեկին ուրիշ թուով)

ԴՐԱՄԱԿԱՆ ՆՈՒՆԵՐ	ՂԵՂ
Սարգիս Սրբանեան Մուշեցի	33.
Եօրդանաքի Փափայ Տիմորի (Յունապղի)	33.
Կարապետ Էֆ. Բերէտտէճեան Պօլսեցի	175.
Պուրստցի Մարտիրոս	16.
Մեծա. Տիրան Էֆէնտի	165.
Եղբարք Մարտիկեան	16.
Մ. Օլիկ Գուշատացի	33.
Բարեպաշտուհի տիկին Չ. (մշակունեալ)	33.
Անիւ Ալիքէյ Ժօլի տեսուչ Բնկ. Անգ. շոգենաւուց 36 կենդինար հանքածուխ	600.
Եկեղեցւոյ ամբուսներու համար բարեպաշտուհի տիկնայց հանդանակութեան	660.
Մ. Առաքել Թիֆլիզեցի	31.20
Մ. Առաք. Մուշեցի	32.20
Բարեպաշտուհի տիկին Արապեան	22.20
Սարգիս Խաչատուրեան Մանիսացի	47.20
Մեղքոն Սեֆէրեան Ախլցխացի	20.
Կարապետ, Խաչատուր և Եղբարք	15.
Յոնան Մելքոնեան	15.
Սափրիչ Մատուր Պապայի եղբօր հարսնի.	5.10
Սարգիս Խորայէլեան	45.20
Յարմատները գերդաստանք	6.
Պ. Գալիթ Երրորտեան	66.
Սարգիս Տ. Յակոբեանց Ախլցխացի	33.
Գրիգոր Յովհաննէսեան	33.
Կարապետ Քեամախցի	33.
Յակոբ Հալաճեան Կեօարացի	33.
Բարեպաշտուհի Տ. Մարի Կարապետեան	176.
Չարեհ Էֆէնտի Տիլպերեան	49.20
Երեք հարսանիքներէ	22.20
Խոմանի Պետրոս Մանիսացի	7.20
Մանուէլ Տ. Յակոբեան Նոր Նախշեանցի	3.20
Տիրացու Ղաղարոս	8.20
Տիկին Յուստինան	3.20
Տիկին Հեղինէ	3.20
Տիկին Յուլիանայ	3.20
Մկրտիչ Երկանեան Թիֆլիզեցի	6.30
ԱԼԻՐ	9.
Բարեպաշտ ոմն ալիւր օխայ	700
Օհան աղա Դահլէքիլեան	80
ՀԱՅ ԵՒ ԽՄՈՐԻՆԷՆ	
Յովհաննէս Բարունակեան 50 հատ փոքր հաց, Կարապետ աղա Արապեան 70 հատ պէք	
Մովսէս աղա Խոմանի 50 հատ կէս օխանոց հաց, Սարգիս աղա Կարապետեան 25 հատ կէս օխ. հաց	
Գեորգ աղա Ռուսթամեան 80 հատ կէս օխ. հաց Ստեփան աղա Սաղապեան 7 հատ օխանոց հաց:	
— Քաղաքիս հայ վարժարանաց, քաղաքական ժողովոյ և Ս. Առաջնորդ Մ. Մուրադեանի ընթացից դէմ տեսարակ մը հրատարակուած է այս օրերս, ուր պարտք ապարդիւն, քաղաքական	

ժողովն հակառակմանադրական և Ս. Առաջնորդն անտարբեր և օրինազանց կը ներկայացուին որոց նկատմամբ մեր դիտողութիւնները գալ յանգամաւ կը թողուին:

— Քանի մը օր առաջ 550 բէտիֆ զօրքեր հասան Սէլանիկէն, որք Նազիրիի գնակէն կը վերաբերին:

— Իզմիրի վերաքննական ատենի նախագահ (մահք. մէի իսթինաֆ բէիսի) Հայտարար Էֆէնտի հրաժարեալ ըլլալով այսօր կը մեկնի ի Կ. Պոլիս, ուրիշ պիտի երթայ Ֆիլիպէ իր նոր պաշտօնատեղին:

— Գողութիւնք, կողոպուտք և սպանութիւնք ինչպէս ամեն ատեն, նոյնպէս մանաւանդ այս մեծ օրերս անթուելի են քաղաքիս մէջ:

Ամենէ ապահով կարծեցեալ փողոցներու մէջ կողոպուտներ կը լինեն միշտ, տուններ կը պարպուին, շատ հեղ աղիւն կը թափի, և ժողովուրդը գրեթէ անհանգստութեան մէջ է միշտ, հրացանք և սուրբ հանապաղ նորանոր կեանքեր կը զոհեն, և տեղացի եւրոպական թերթերը անգղաբար կը գանգատին ոստիկանութեան դէմ, սակայն ապարդիւն կ'մնան անոնց գանդատները:

— Կ. Պօլսոյ վերաքննական ատենի առաջին քարտուղար Պէհմա պէյ, որ իզմիրի վերաքննական ատենի պատժական բաժնին նախագահ կուշուած է, ապեալ ուրբաթ օր քաղաքս հասնելով իր պաշտօնին գլուխն անցած և արդէն սկսած է գործադրել պատժական նոր օրինագիրքին տրամադրութիւնները որ քանի մը ամիս է վեր գաղղիներէն տաճկերէնի թարգմանուած է:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Թ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ և ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐ

Թ. Յ. Պարոնեան Էֆէնտիի ԼՈՅՍԻ միջոցով հրատարակած տասը անգամ Ժողովաբանական կենսագրութիւնները ամփոփող գրքոյ մէ, որոյ թէ գուարձալի ու վսեմ է. թէ բարքն ու ընթացքն ուղղութեան կողմէ երգիծական նուրբ են բարձր ոմն խիստ արժանի է ամեն կարգի անձանց ընթերցման: Պարոնեան Էֆէնտիի ճեգնաբանական բնատուր ձիրքն ու տաղանդը ազգովին քաջալերութեան է զնորձակալութեան արժանի ըլլալուն համար կը նրախաբարբաբ ըր զրաւեք հայերը, որ փութան ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋԵՐԻ մէջմէ օրինակ գնել, որոյ արժեքն է կես արծաթ Մեծիտի:

ՅԻՇԱՏԱԿ ՍԻՊԵՐԻԱԿԱՆԻ ՄԸ

Ռուսոյ և անոր մէկ մասը կաղմող Սիպերիոյ վրայ ծանօթութիւններ տուող այս պատմական գրութիւնը թարգմանուած է Մ. Մամուրեան պատուելիի կողմանէ: Արժան են ընթերցման հեղինակին տարադրութեան, իր հայրենի իղձերուն և Սիպերիայէն վախճուելու նկարագրութիւնները:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՅԻՈՆԸ բուսական բարձր գինով ծախուեցաւ, այսինքն 155էն մինչև 160 զրուշ չէքին: ԲԱՄՊԱԿԸ բուսական յարգ ստացած է հապարակին վրայ, գինը բարձր է, և այս շարժու 600 հակ մեքենայով մաքրուած տեսակէն ծախուեցաւ ի գին 440—450 զուրուշ, և 50 հակ Ասանայի տեսակէն ի գին 430 զուրուշ:

ՓԱԼԱՄՈՒՏԸ առջի գինէն զգալի փոփոխութիւն մը չի բեր, մաքրուած տեսակէն ծախուեցաւ 5300 կենդինար ի գին 95—114 զրուշ և 1600 կենդինար ծախուեցաւ չրանուած ի գին 82—92:

ՍՈՒՍԱՄԸ կարևոր փոփոխութիւն մը չունի նշանակութեան արժանի:

ՃԷՆԻՆԷ հաղիւ թէ 9 տողակ վաճառեցաւ օխան 7 զուրուշ:

ԲՈՒՐԴԻ վաճառքին և գնոյն վրայ ևս փոփոխութիւն չկայ:

ՏԵՂ ԼՐԱԳՐՈՅ, Գ. Կ. Պ. ՊԱՆԴԱՐԵԱՆ: